ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 966 - Ա

«ՈՒՐԲԱՆ» ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱ-ՆԱՑՎՈՂ «ԳԱՐԳԱՌ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող՝ 45,908,177 դրամ ընդհանուր արժողությամբ «Գարգառ բնակավայրի խմելու ջրամատակարարման համակարգի և հանրակրթական դպրոցի վերանորոգում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01549618) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Իջևանի Բետոնիտշին ԲԲԸ և Հարշին ՍՊԸ-ի առաջատար գործընկեր Հարշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07627323) 2023 թվականի հուլիսի 12-ին կնքված՝ N UF-/23/-3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գարգառ

բնակավայրում ջրամատակարարման համակարգի ներքին ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 10,796,752 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Իջևանի Բետոնիտշին ԲԲԸ և Հարշին ՍՊԸ-ի առաջատար գործընկեր Հարշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07627323) 2023 թվականի հուլիսի 12-ին կնքված՝ N UF-/23/-4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գարգառ բնակավայրում ջրամատակարարման համակարգի ներքին ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 4,310,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Իջևանի Բետոնիտշին ԲԲԸ և Հարշին ՍՊԸ-ի առաջատար գործընկեր Հարշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07627323) 2023 թվականի հուլիսի 12-ին կնքված՝ N UF-/23/-5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքի 2-րդ հարկի կառուցման աշխատանքների իրականացում՝ 27,175,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Իջևանի Բետոնիտշին ԲԲԸ և Հարշին ՍՊԸ-ի առաջատար գործընկեր Հարշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07627323) 2023 թվականի հուլիսի 12-ին կնքված՝ N UF-/23/-6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքի 2-րդ հարկի ջեռուցման համակարգի կառուցման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,117,175 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Սոլար Էյ Էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 03554615) 2023 թվականի նոյեմբերի 30-ին կնքված՝ N DC_S.A.M._41/23 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տանիքին արևային ֆոտովոլտային կայանի կառուցման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,709,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Գրանթ Թորնթոն» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2023 թվականի հուլիսի 12-ին կնքված՝ N AT-AU-083-23 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարած աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

29.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ